



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 ապրիլի 2025 թվականի թիվ 43-Ա

ք. Երևան

«ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**), ուսումնասիրելով 2025 թվականի ապրիլի 04-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 25 վարչական վարույթի նյութերը՝ **պարզեց**.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ **Օրենք**) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս հայտնաբերել է Օրենքի պահանջի առերևույթ խախտում, այն է՝ «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ **ցանցային օպերատոր**) կողմից իր 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև 2025 թվականի ապրիլի 01-ը Հանձնաժողով չներկայացնելը:

2025 թվականի մարտի 05-ին Հանձնաժողովի կողմից Հեռարձակողների և ցանցային օպերատորների ղեկավարներին է հասցեագրվել թիվ Ե/04/04.1/195-25 գրությունը՝ Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների կատարման անհրաժեշտության մասին:

Ցանցային օպերատորը նշված գրության վերաբերյալ որևէ պատրասխան չի ներկայացրել:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2025 թվականի ապրիլի 04-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ և 2025 թվականի ապրիլի 04-ի թիվ Ե/04/04.1/304-25 գրությամբ ծանուցել է ցանցային օպերատորին՝ հայտնելով, որ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումներն ու բացատրությունները:

Ցանցային օպերատորը 2025 թվականի ապրիլի 10-ին Հանձնաժողով է ներկայացրել 2024 թվականի ընթացքում ինտերնետ և թվի ծառայությունների տրամադրումից գոյացած հասույթի վերաբերյալ տեղեկությունը, ինչպես նաև գրությամբ պարզաբանել է, որ «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՑԵՐ» ՍՊ ընկերության աշխատակցի կողմից տեղի է ունեցել

թյուրիմացություն, և կարգավորող պետական մարմին չի ներկայացվել նախորդ տարվա հասույթի վերաբերյալ բացվածք և չափի վերաբերյալ տեղեկություն, և որ ծանուցումը ստանալուն պես այն կազմվել է:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ սույն օրենքը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների, օպերատորների, կարգավորող պետական մարմնի և հանրային տեսալսողական մեդիաձառայություն մատուցողի գործունեության կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմնի վրա:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ցանցային օպերատորը՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը սեփականության կամ այլ իրավունքով ունի մալուխային կամ այլ ցանց (բացառությամբ հաճախականային սահմանափակ ռեսուրս օգտագործելու դեպքերի) և ապահովում է տվյալ ենթակառուցվածքի տեխնիկական շահագործումը.

Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները և օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 01-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Ուստի Օրենքով սահմանված նորմերի պահանջները պարտադիր են ոլորտում գործունեություն իրականացնող բոլոր տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների և օպերատորների համար:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորի կողմից ներկայացված բացատրությունները, որի արդյունքում հայտնի է դարձել, որ ցանցային օպերատորը Հանձնաժողովի կողմից 2025 թվականի ապրիլի 04-ի ծանուցումը ստանալուց հետո՝ 2025 թվականի ապրիլի 10-ին, Հանձնաժողով է մուտքագրել 2024 թվականի հասույթի չափի վերաբերյալ տեղեկությունը՝ պատճառաբանելով, որ կարգավորող մարմին անհրաժեշտ տեղեկատվությունը չի ներկայացվել աշխատակցի կողմից թյուրիմացության պատճառով:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Օրենքով Հեռարձակողների և օպերատորների համար պարտավորություն է սահմանված՝ յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 01-ը Հանձնաժողով ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն, սակայն ցանցային օպերատորի կողմից չի պահպանվել Օրենքի պահանջը և Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը՝ դրանով իսկ խախտելով **Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:**

Հանձնաժողովը 2025 թվականի մարտի 05-ի թիվ Ե/04/04.1/195-25 գրությամբ Հեռարձակողներին և ցանցային օպերատորներին տեղեկացրել է Օրենքի վերոնշյալ պահանջի կատարման մասին և առաջարկել Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն, սակայն ցանցային օպերատորի կողմից սահմանված ժամկետում պահանջվող տեղեկությունը Հանձնաժողով չի ներկայացվել (Օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 2020 թվականի օգոստոսի 07-ից սկսած, յուրաքանչյուր տարի Հանձնաժողովի կողմից գրություններով ցանցային օպերատորին տեղեկացվել է Օրենքի վերոնշյալ պահանջի մասին):

Հատկանշական է, որ ցանցային օպերատորը 2020 թվականի նոյեմբերի 26-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (լիցենզիայի սերիան, համարը՝ ԿՀ N 287, գործողության ժամկետը՝ 26.11.2020թ.-26.11.2030թ., սկուման տարածքը՝ Կոտայքի մարզ) և պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ:

Ցանցային օպերատորի կողմից վարչական վարույթի հարուցումից հետո՝ 2025 թվականի ապրիլի 10-ին, 2024 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ Հանձնաժողով մուտքագրելը բավարար հիմք չէ ցանցային օպերատորի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար:

Հանձնաժողովը վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում արձանագրում է, որ Օրենքով Հեռարձակողների և օպերատորների համար սահմանված է պարտավորություն, որը չի պահպանվել ցանցային օպերատորի կողմից և վերոգրյալը հիմք է հանդիսանում Հանձնաժողովի կողմից Օրենքի դրույթով սահմանված իրավախախտումը արձանագրելու և պատասխանատվություն կիրառելու համար:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) **տուգանք.**
- 3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի և չափի վերաբերյալ տեղեկություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և **ղեկավարվելով** «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասով՝ **Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը**

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՅԵՐ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԲԱՐԳԱՎԱՃՈՂ ՑԱՆՅԵՐ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

28 ապրիլի 2025 թ.
ք. Երևան